ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՓՈՐՁԱԿԱՅԱՆ

ԽՐՃԻԹ-ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ—ԳՐՔՈՒՅԿ № 2

636.3.082

Ա. ՌՈՒԽԿՅԱՆ

# ՈՉԽԱՐՆԵՐԻ ԽՏԱՑՐԱԾ ԾԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՓՈՐՁԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ

A 4564

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԳԵՈՒՂՀՐԱՏ 1936

Պատ. խմբագիր՝ Ս. Խառնակյան, Նշ. Մալաթյան
Թարգմ. Մ. Ավետիսյան
Սրբագրիչ՝ Գար. Հակոբյան
Գլավլիտի լիազոր № 1108, Հրատ. № 371, տիրաժ 1500, պատվեր № 610
Հանձնվել է արտադրության 4/IX 1936 թ.
Ստորագրված է տպագրելու 15/IX 1936 թ.

---

Պետհրատի տպարան, Երևան, Նալբանդյան № 11

# ՓՈՐՁԻ ՆՊԱՏԱԿԸ

Փորձի հիմնական նպատակն է՝ ըստ հնարավորին ճիշտ կերպով պարզել, թե վոչխարների սեռական ցանկությունը տարվա տարբեր սեզոններին ինչ բիոլոգիական օրինաչափությամբ է արտահայտվում և ուսումնասիրել մի շարք արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը սեռական ցանկության արտահայտման, ձվազատման (օվուլացիա), բեղմնավորման և հետագա ծնի վրա։

Հայաստանում այս հարցի մասին գիտահետազոտական տվյալներ չկան։ Այդ պատճառով փորձն անցկացնելու ժամանակ պետք է լայն կերպով օգտագործել գրականության մեջ յեղած տվյալները և առանձնապես անասնապահության առաջավորների պրակտիկ փորձը։

## ԽՏԱՑՐԱԾ ԾՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ոչխարների սեռական ցանկությունը, բեղմնավորումը, ծինը և այլն, կենսաբանական բարդ երևույթներն են։ Ծինը կապված է մայրացու ոչխարի և արտադրող խոյի տարիքի, առողջության, գիրության, մարմնի մեծության, այլև նրանց կերակրման ու խնամքի պայմանների հետ, տվյալ վայրի կլիմայական, աշխարհագրական գյուղատնտեսական տարբեր ճյուղերի զարգացման և այլ պայմանների հետ։

Այս բոլոր արտաքին և ներքին գործոնները, որոնք թողնում են այս կամ այն կերպ իրենց ազդեցությունը վերոհիշյալ կենսաբանական երևույթների վրա, պահանջում են ոչխարների հետ գործ ունենալիս նրանց լուրջ և բազմակողմանի ուսումնասիրել, որից և կախված է ոչխարների հետ կատարվելիք աշխատանքի հաջող ընթացքը։

Այս խնդիրը բազմակողմանիորեն ու-

ուսումնասիրելու համար անհրաժեշտ է փորձի ընթացքում հաշվի առնել հետևյալ կարևոր գործոնները, վորոնցից գլխավորապես կախված է աշխատանքի հաջողությունը։

1. Տվյալ տնտեսության կլիմայական և կերային պայմանները.

ա) հաշվառել և անալիզի յենթարկել ջերմաստիճանի փոփոխությունները տվյալ շրջանի փորձի ամբողջ ընթացքում (տվյալները վերցնել մոտակա օդերևութաբանական կետից).

բ) տեղումների (անձրև, ձյուն) քանակը և նրանց ազդեցությունը սեռական ցանկության արտահայտման օրինաչափության վրա.

գ) վոչխարների կերակրումն ու պահվածքը տվյալ շրջանում և տնտեսությունում և, դրան իբրև հետևանք՝ մաքիների սնվածությունը փորձի ժամանակ։

2. Կաթնատվության շրջանի (լակտացիայի) տևողության ազդեցությունը մա-

քու սեռական ցանկության արտահայտվելու հետագա ժամկետի վրա։

3. Արտադրող խոյերի վորակի ազդեցությունը մաքիների սեռական ցանկության արտահայտվելու վրա, բեղմնավորման ու պտուղներ տալու վրա (խոյերի ցեղը, մեծությունը, տարիքը, առատ սերմնահեղուկ արտադրելու ունակությունը, ծածկելու կարողությունը և այլն)։

4. Սեռական ցանկության արտահայտվելու ժամկետներն ու որինաչափությունն ամբողջ փորձի ընթացքում։

## ՓՈՐՁԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Փորձը կատարվում է հետևյալ սխեմայով. յուրաքանչյուր կետում փորձարկման համար առանձնացվում է ամենաքիչը 500 մաքի և 20 խոյ (ներառյալ նաև փորձախոյերին)։

Փորձարկվող բոլոր մաքիները փորձի սկզբին պետք է ունենան միատեսակ և միջին գիրություն, պետք է լինեն հնարավո-

րության սահմաններում մի տարեկի։ Արտադրող-խոյերը և փորձախոյերը պետք է լինեն 3—5 տարեկան հասակի, առողջ, միջակ գիրության և ծածկելու մեծ ընդունակով։ Եթե տվյալ շրջանում կան կարակուլի ցեղի խոյեր, սեռական ցանկություն ունեցող մաքիներին գարնան բեղմնավորման սեզոնին անհրաժեշտ է ծածկել նրանցով։

## ՓՈՐՁԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Փորձն սկսվում է 1936 թ. աշնանը և վերջանում է մի տարուց հետո՝ 1937 թ։ Ոչխարների բեղմնավորման թողնելու ժամկետները հետևյալն են.

Աշնանը—1936 թ. բեղմնավորումը կատարվում է սեպտեմբերի սկզբին և շարունակելով տևում է մինչև նոյեմբերի 15-ը (սպասվելիք ծինը լինելու յե 1937 թ. փետրվարի 1-ից մինչև մարտի 15-ը)։

Գարնանը—1937 թ. բեղմնավորումը կատարվում է մարտի 15-ից և շարունակելով տևում է մինչև հուլիսի 1-ը (սպասվելիք

ծինը չլինելու յէ 1937 թ. օգոստոսից մինչև սեպտեմբեր. ամիսը)։

Գործնականայլին յերկարաձիգ զուգավորում անց է կացվում նրա համար, վորպեսզի հայտաբերվեն մաքիների սեռական ցանկության մաքսիմալ չափով արտահայտվելու ժամկետները։

## ԿԱՏԱՐԵԼ ՃՇԳՐԻՏ, ԼՐԻՎ ՍԻՍՏԵՄԱՏԻԿ ՀԱՇՎԱՌՈՒՄ ՅԵՎ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐ

Հաշվառումը և հետևողական գրանցումները կատարելը փորձնական աշխատանքների ամենակարևոր մասնիկներն են։ Առանց այդ աշխատանքների կատարվող փորձերը կարող են կորցնել իրենց նշանակությունը և շոշափելի փորձնական գիտական արդյունք տալը, ճիշտ յեզրակացություններ կատարելը հնարավոր չէ։

Այդ նպատակով պետք է կատարել ներքոհիշյալ ձևերով հարկ յեղած հաշվառումը և գրանցումները։

Գրանցման մատյան № 1

# ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ՝ ՓՈՐՁԱՐԿՎՈՂ ՄԱՔԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Կենդանիների գրանցումը գույքամատյանի մեջ)

| № ը. կ. | Ականջի № | Ցեղը | Տարիքը | Կենդանի քաշը | | Ծանոթութ. |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Աշնանը 1/10 | Գարնանը 1/4 | |
| | | | | | | |

Բացատրական.— Յուրաքանչյուր տողի վրա գրանցվում են մի կենդանու վերաբերյալ տեղեկությունները անհատականորեն։ Ցեղի և տարիքի վերաբերյալ տեղեկությունները պետք է վերցնել ԿԱԹ-ից կամ զոոտեխնիկից։

Գրանցման մատյան № 2

# ՓՈՐՁԱՐԿՎՈՂ ՄԱՔԻՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

| Արոտային շրջան | | | | | | Մսուրային շրջան | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սկիզբը (ամիսը, թիվը) | Վերջը (ամիսը, թիվը) | Տևողությունը (օրերով) | Լրացուցիչ կերեր | | | Սկիզբը (ամիսը, թիվը) | Վերջը (ամիսը, թիվը) | Տևողությունը (օրերով) | Տրված կերերը (կգ-ով) | | | | | | |
| | | | Վարսակ | Քուսպ | Թեփ և այլն | | | | Խոտ | Դարման | Սիլոս | Արմատապտուղներ | Վարսակ | Քուսպ | |
| | | | | | | | | | | | | | | | |

Բացատրական.—Գրանցումները պետք է կատարել ամեն օր, ինչպես մսուրային, այնպես էլ արոտային շրջաններում, նշելով կերերի անունները և քանակը։

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև յուրաքանչյուր մաքու և

խոյի ստացած կերայլին միավորների և ծառսելի սպիտակուցի չափը, ըստ կերի խմբի (կանաչ մասսա, կոպիտ կերեր, հյութալի կերեր, խտացրած կերեր և այլն)։

Այս վերջինների վերաբերյալ կարելի է օգտագործել պրոֆ. Պապոյի «Կերային նորմաները և կերային տախտակները» գրքույկը, ինչպես նաև նրա «Գյուղատնտեսական կենդանիների կերակրումը» գիրքը (լույս է տեսել հայերեն)։

Գրանցման մատյան № 3

## ՓՈՐՁԱՐՎՈՂ ՄԱՔԻՆԵՐԻ ՊՏՂԻ ՅԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

| Մաքուր ավանդի № | Ցեղը | Վերջին ծնելու ամիսը և օրը (տարին, ամիսը) | Գործածված կերերի քանակը | Ամսական միջին կիթը (կիլոգր.) | | | | | Ընդհանուր կաթը Ա ամսին | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ամիսները | | | | | | |
| | | | | 1-ին ամիս | 2-րդ | 3-րդ | 4-րդ | Ընդամենը | | |
| | | | | | | | | | | |

խոյի ստացած կերային միավորների և մարսելի սպիտակուցի չափը, ըստ կերի խմբի (կանաչ մասսա, կոպիտ կերեր, հյութալի կերեր, խտացրած կերեր և այլն)։

Այս վերջինների վերաբերյալ կարելի է օգտագործել պրոֆ. Պապոյի «Կերային նորմաները և կերային տախտակները» գրքույկը, ինչպես նաև նրա «Գյուղատնտեսական կենդանիների կերակրումը» գիրքը (լույս է տեսել հայերեն)։

Գրանցման մատյան № 3

## ՓՈՐՁԱՐԿՎՈՂ ՄԱՔԻՆԵՐԻ ՊՏՂԻ ՑԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

| Մաքուր տակերի № | Ցեղերը | Վերջին ծնելու ու ամիսը և ժամը (ամսաթիվ, ամիսը) | Գուղատնտեսական ծնվելու քանակը | Ամսական միջին կիթը (կիլոգր.) | | | | | Ցոսված քաշը ծ օրում | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ամիսները | | | | | | |
| | | | | 1-ին ամիս | 2-րդ | 3-րդ | 4-րդ | Ընդամենը | | |

**Բացատրական.**— *Գրանցվում է յուրաքանչյուր փորձարկվող մաքու վերաբերյալ ԿԱՖ-ում յեղած համապատասխան պաշտոնական տվյալների հիման վրա և օգտագործվում են այն տվյալները, վորոնք ստացվում են փորձարկման ընթացքում։*

Գրանցման մատյան № 4

## ՓՈՐՁԱՐԿՎՈՂ ՄԱՔԻՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ, ԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ, ԾՆԻ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ

| Մաքու ականջի № | Վերջին անգամ յերբ է ծնել | Գարնանը խոյերին բեղմնավորման թողնելու ժամանակը (ամիսը և թիվը) | Առաջին անգամ յերբ է ծածկվել վոչխարը (ամսաթիվը) | Կրկնակի անգամ յերբ է ծածկվել (ամսաթիվը) | Ծնի արդյունքները | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Կենդանի ծնված գառների թիվը | Մեռած ծնված գառների թիվը | Վիժումների թիվը | Մայր վոչխարների առողջությունը |
| | | | | | | | | |

**Բացատրական.** — *Գրանցվում է անհատապես յուրաքանչյուր մաքու վերաբերյալ ԿԱՖ-ի կամ վոչխարապահների ճիշտ տեղեկությունների հիման վրա։*

# ԽՈՅԵՐԻ ՎՈՐԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

| Խոյի ականջի № | Տարիքը | Ցեղը | Կենդանի քաշը | Որակավորումը ըստ արտաքինի (բոնիտիրովկա) | Ծանոթություն. |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |

**Բացատրական.**—*Գրանցվում է յուրաքանչյուր արտադրող խոյի վերաբերյալ։*

*Տարիքի, ցեղի և կենդանի քաշի վերաբերյալ տվյալները պետք է վերցնել ԿԱՖ-ից կամ զոոտեխնիկից, իսկ սերմնահեղուկի գնահատականները պետք է վերցնել ամսաթիվ կատարված հատուկ անալիզների արդյունքներից։*

*Օգտագործել ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի* **1936** *թ. հրահանգը՝ վոչխարների արհեստական սերմնավորման վերաբերյալ։*

Գրանցման մատյան № 6

# ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

| Ջերմաստիճանները | | Մթնոլորտային տեղումները | |
|---|---|---|---|
| Դրսի օդի ջերմաստիճանը (10 օրյակներով) | Գետի ջերմաստիճանը (10 օրյակներով | Մթնոլորտային տեղումների չափը (10 օր ) | Քամիների ուղղութ. (բալերով) և 10 օրյակ՝ |
| | | | |

Բացատրական.—Օդի ջերմաստիճանի և մթնոլորտային տեղումների վերաբերյալ տեղեկությունները (օդի ջերմաստիճանը, անձրևների, ձյունի, կարկտի, քամիների, խոնավության) կարելի յե վերցնել մոտակա օդերևութաբանական կայանից, իսկ գետի ջերմաստիճանի վերաբերյալ՝ ՎԱՖ-ից։

---

# ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն փորձարկումը կատարելիս կոլտնտեսական փորձարարներին հանձնարարվում է օգտագործել հետևյալ գրականությունը.

1. Պրոֆ. Պոպով.—Գյուղատնտեսական կենդանիների կերակրումը
2. Պրոֆ. Պոպով.—Կերային նորմաները և կերային տախտակները
3. Վ. Կ. Միլովանով.—Կովերի և վոչխարների արհեստական սերմնավորման մասին
4. Ն. Դավիդովի, Ո. Սելիկանովա, Շ. Գենձեխաձե.—Կովերի ու վոչխարների արհեստական սերմնավորումը
5. ԽՍՀՄ Հողժողկոմատի հրահանգը՝ 1936 թվին վոչխարների արհեստական սերմնավորում անցկացնելու մասին

Գրականությունը ձեռք բերելու համար դիմել Պետհրատի բոլոր գրախանութներին և Երևան՝ Նալբանդյան № 11, Գյուղհրատին

20 կոպ.

[034]
642
A I/4564

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

А. А. РУХКЯН

Методика опыта по уплотн... овец

Сельхозгиз 1936

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0039691